ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 93

# ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՕՐԱԳԻՐ

ՈՒՐԲԱԹ 12 ՀՈԿՏԵՄ 1845

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Այս օրագրութեան ով որ կը բաղձայ [illegible] Տպարանը [illegible] մէկ տարեկան գինը 125 ղուրուշ է ։ Ի Պոլիս [illegible] ։ Ի [illegible] ։ [illegible]

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իզմիր 12 Հոկտեմբեր ։

Ամէն ազգ կը փափաքի, թէ Եւրոպիա՝ ժամանակով քաղաքավարութեամբ կը պայծառանայ. բայց այսու ամենայնիւ զանազան գէշ սովորութիւնք ու վնասակար միջոցներէ զերծ եւ ազատ չէ. անոնց ի՞նչ ազդեցութեան յառաջ գալուն վրայօք ան-գիտութիւն տալը՝ բարեխնամ Հեղինակաց գրե-լին թող տալով՝ հիմայ մենք միայն սա ըսենք որ, երբոր մէջերնին ինչեւիցէ գէշ սովորութիւն մը շարունակօրէն տեսնուի. զինք նէ, այն տեղուանց Օրագիրներն ալ չեն լռեր անոնց վրայօք իրենց պարտաւորութիւնը գործի դնելու, այսինքն կըսեն իրենց ազգին ու հայրենիքներուն մէջ մնացած ու շատցած անկարգութիւնը անաչառապէս հրատարակելու ։

Անոնք (այսինքն օրագիր հրատարակողները) աւանկ ընելովնին՝ չէ թէ խել մը թեթեւամիտ մարդիկներուն կարծածը համեմատ՝ հայրենեաց կը հակառակին, այլ ընդ հակառակն՝ ճշմարիտ հայրենասէր ։

Աստ գի ով որ ըսայ՝ թէ որ ըսէ իր ազգը կըգովէ՝ կամ իր ազգին նախնիքներուն ինչեւիցէ բանի մը մէջ ունեցած յառաջադիմութիւննին կը պատմէ, ու անոնց քաջութեամբը ու հին առաւելութիւններովը կըպարծենայ նէ՝ անոր ազգասէր

ըսուէր. որովհետեւ ամէն ազգի մէջ՝ թէ գովութեան և թէ պարսաւելու բաներ ու գիտցուածներ անպակաս կըգտնուին. Աստի ազգասէր անէ՝ երբ որ հարկը կըպահանջէ՝ որ իր ազգին խրախուսութիւն մը տայու, և յառաջդիմութեան միջոցները ընդգրկել տալու համար հա-մոզելու, այն ատենը ազգին անցած կացած քա-ջաստկաց արժանի բաները գովութեամբ առաջ կը բերէ, և նորէ նոր ազդօղուն միջոցի մը ծաղ-կելը հասարակութեան կըսուէ, և բարերար անձի մը իր ազգին բրած աստարութիւնը երախ-տագիտութեամբ կըծանուցանէ, բայց և այնպէս ալ իր ազգին մէջ ժողովրդարար ազդելով գէշ սո-վորութիւններուն վրայօք անփոյթ չի ըլլէր, կարծ խօսքով՝ առաջինը պարագ կըսեր ըսել, և մի-կայն ալ թող չի տար ։

Ահա՛ այսպէս գիտեն Եւրոպայի խել մը օ-րագիրները իրենց ազգին ու հայրենիքին վրայօք անկեղծաբար շարժիլ. ինչպէս որ մօտ օրերս զաղղիական օրագիրը՝ փարիզու մէջ թուղթ խաղալու գէշ սովորութիւնը շատնալուն վրայօք՝ խոհեմութեամբ մը հետեւեալ յօդուածը կը-հրատարակէ ։

«Քանի մը տարի է, Փարիզոյ կառավարու-թեան խաղալու թուղթէն առած տուրքը՝ զար-մանալի կերպով մը աւելցաւ, որ խաղին վրայ աւելցած գէշ յօժարութենէն յառաջ կուգայ։ Այս հարկը՝ որ 1830 ամին միայն 50,000 ֆրանք

էր, հիմայ մէկ միլիոն 500,000 ֆրանքի կը հասնի, փարիզ խաղալու համար թուղթ շինող մը կա-ռավարութեան 50,000 ֆրանք տուրք կուտայ հիմայ՝ իր շինած թուղթերուն համար՝ փոխա-նակ 15,000 ֆրանքի, որ կըհատուցանէր առաջուց տարուայ տալի» ։

Անշուշտ է հասարակութեան մը մէջ՝ ինչեւիցէ մոլութեան ու գէշ սովորութեան մը ճանա-չել և գիտալով չառնալը՝ բաւ մեծ մասին մեծա-մեծաց գործով օրինակ ատլերներէն կամ՝ անոնց թոյլատուութիւննէն յառաջ կուգայ ։ Ինչպէս է նէ, ազգի մը գլխաւոր եղօղը՝ իրեն փոքր բա-ցի բարի սովորութիւններով զարդարելը (որ է ուղղափառ քրիստոնէին անժխտելի պարտաւո-րութիւնը) իր անձին օգուտ ընելէն՝ ի զատ՝ հա-սարակութեան ալ երջանկութեանը առիթ կըլլայ. ըստ որում գործը՝ խօսքէն աւելի ազ-դու է ։

Գիտենք որ, որեւիցէ խաղ մը՝ թէեւ առանց բա-ռնալի խաղցուի ալ նէ, բաղդաւորին սա վնասը կուտայ որ՝ իրեն սուղ կենաց անգին բաղձերը դուրս տալը վայրապարն (բէլէֆ) կընէ. և ա-ռիկայ պզտիկ վնաս չէ՞, ժամանակին յարգը գիտցողներուն ։

Բայց ատկով խաղին վնասները անթիւ են, և երկար յօդուածներու կարօտ ։ Ի՞նչ աւեներ չի փլեց, ի՞նչ հզօրներ չի կործանեց նայած (խաղմարը) ։

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

ԿԱՄ

Գինեհատներ Ընկերովինեան տեղեկութիւններ

(Շարունակութիւն Տես թիւ 92.)

Զ. Անգլիական Իռլանտայի բնակիչներուն սովորին մէկ ի՞նչ եռանդ ձգելը՝ երեք տարիէ հետէ (1841էն սկսելով), թէ որ հասկանալուն ալ ուզենք նէ. Իռ-լանտա տպուած օրագիրներուն քաղուածը ընելու ենք. մէկ քանիք մը ժամանակով ըլլայ նէ՝ այն որ այն քաղաքը որպէս թէ յաղթական հանդէս մը կը-վայելին. առաջին քաղաքութեանը հրաշալի հետե-ւութիւնները չհաւատացուելու պէս բաներ են։ Հա-սարակութեան հնացեալ սովորութեանը մէջ եղած փոփոխութիւնը այնպիսի բան մըն է որ՝ քանի մը տարիէ վերջ գործարան բանեցնողները շինած տը-ներնին անելու մարդ չի կըրնալ գտնելնուն համար՝ գործարաննին ծախու հանեցին. շատ գինետուններ՝ որ աղքատ Իռլանտացիներուն շատը առաջ հոն կը-ժողվուէին և չըրած խայտառակութիւններն չէր մը-

նար, գոցեն նեղս ուր կալով մարդ չի գտնուելուն համար գոցուեցան. և Քորք քաղաքին Իռլանտա-յին ծանուցական թուղթը կըպատմէ որ՝ Ժուժկալու-թեան Ընկերութեանը հաստատուելէն առաջ՝ գինով ըլ-լալով փողոցը պառկող՝ իրարու վրայ հաշուելով գիշերը քառասուն հոգի կըլլար. Ընկերութիւնը հաս-տատուելէն վեր գտնելէն ետև գիշերը երկուքէն աւել տեսնուած չէ ։ Ժուժկալութիւնը՝ աղքատներուն մէջ յառաջուն մեծ նշան կըբռնուի այսպէս գործարան-ներուն՝ գինետուններուն գոցուելը. որովհետեւ առա-ւօտ չկայ անոնց համար. ամեն որ Իռլանտայի օ-րագիրները աստ վերաբերեալ մէկ նոր բան մը, մէկ գինետանի մը, մէկ այսպէս գործարանի մը գոցուիլը կըգրեն ։

Անցեալ ամառուան կըման արին Իռլանտայի մայ-րաքաղաքը երեւելւոն առաջին անգամը՝ ազգային մէկ մեծ տօնախմբութեան մը առիթ տուաւ. հանդիսա-ւոր թափօր ըրին. և այն թափորին մէջ կըցուցնէին թէ Տուպլին մայրաքաղաքը և թէ բոլորները գտնուած տեղերը հաստատուած Ժուժկալութեան Ընկերութեան-ցն անդամները. մէջերնին հազարաւոր մարդիկ կա-յին որ իրենց առողջութեամբը և գինովութեանը

անուանի եղած էին. և հանդէսին մէջ բարեհամբերներուն հանդարտութիւնը և անխռովութիւնը և բարե-կարգութիւնը՝ բոլորին փոփոխիլը յայտնի կը ցու-ցնէր ։ Այս տեսարանս վերայ մարդասէր եղող մարդոց մէկ մեծ զմայլմանութիւն մըն էր. ժամանակ քահանաներուն, որ առանց հոգնելու ջանք ըրեր էին մարդս իրեն պատուական ատեանէն հզօր առանց մէկ գէշ սովորութենէ մը ետ քաշելու. փողոցները կերպասներով (խաւմաշներով) զարդարուած էին. և պատուական բէհէզներ անոնց ձակատին վրա քաշուած էր. և ամէն բան յայտնի կը ցուցնէր որ այս հանդէսին առնելը քաղաքացւոց սրտոտ ուրախու-թեամբ և խնդութեամբ լեցուած էր. Ժուժկալութեան Ընկերութեան ալ և այլ ժողովրդներէն թափօրին մէջ գտնուողները տասն և չորս հազար հոգի կային. ամէն մէկ ընկերութիւն իրեն յատուկ պատ դրօշակ ունէր, որոնց վրան այլեւայլ խորհրդաւոր կարճ լուսանկարներ գրուած էին. մէկին վրայ գրուած էր "Ինձ հաւատարիմ մինչեւ ցմահ", որ է Յովհաննու Յայտնութեան խօսքը (Բ. 10). մէկ ուրիշ դրօշակի մը վրայ՝ սապէս մէկ պատկեր մը քաշուած էր. մէկ մարդ մը գինովցած փռուած պառկած, և կնիկն ալ

